— Ինքս էլ չգիտեմ: Մենք այն թռչուններից ենք, որ միշտ միեւնոյն ճիւղի վրայ չեն նստում:

Ես ոչինչ չպատասխանեցի:

— Դու երէկոանից միտքդ չե՞ս փոխել, — հարցրեց նա, իմ ձեռքից բռնելով եւ մի կողմ տանելով, որպէսզի խօսակցութիւնը իմ եւ նրա մէջ առանձին լինէր:

Ես դժուարացայ պատասխանելու:

— Ինչո՞ւ չես խօսում:

— Ի՞նչ խօսեմ:

— Մենք պէտք է հեռանանք այստեղից: Դու չե՞ս ցանկանում դառնալ քո մօր մօտ:

— Ես ցանկանում եմ ձեզ մօտ մնալ:

— Թո՛ղ տուր մեզ, Ֆարհատ, գնա՛յ, մօրդ մօտ, մխիթարէ նրա անբախտութիւնը: Հեռացի՛ր մեզանից: Մենք գլխից ձեռք վեր առած մարդիկ ենք...: Մեր նաւը դեռ մրրիկների մէջ է գնում. ո՞վ է իմանում, ինչ կը լինի նրա վերջը...: Քեզ վիճակուած է բախտի աւելի խաղաղ բաժինը, Ֆարհատ, գնա՛յ պսակի՛ր Սոնայի հետ, նա քեզ սիրում է, նրա հետ ուրա՛խ կերթայ ձեր կեանքը: Սոնան լաւ աղջիկ է:

Վերջին խօսքերը շարժեցին իմ սիրտը եւ ակամայ արտասուքը թափոեցաւ իմ աչքերից: Կարօն այնպէս ձեւացրեց, թէ չէ տեսնում եւ շարունակեց իր խրատները:

— Յիշում ե՞ս, Ֆարհատ, երբ մենք դեռ վարժատան մէջն էինք, շատ անգամ ասում էինք միմեանց. «մենք եղբայրներ ենք, մենք պէտք է միասին աշխատենք եւ միասին վայելենք մեր վաստակը»: Ես ունեմ այժմ մի փոքրիկ գումար, ահա այս քսակի մէջն է, ա՛ռ, քեզ եմ տալիս. նա ինձ պէտք չէ: Այս գումարով դու կը գնես քեզ համար մի կտոր հող, կը սարքես մի արօր, քո ձեռքով կը մշակես քո հողը: Քա՛ղցր է վաստակը, երբ մարդ ստանում է իր սեփական հողից:

Ես ետ մղեցի քսակը, պատասխանելով.

— Յիշում եմ բոլորը, ինչ որ ուխտեցինք դեռ դպրոցում եղած ժամանակ: Բայց դու, երեւի, մոռացել ես մի բան. մենք երդուեցինք եւ օգնել միմեանց ամէն փորձանքների մէջ մեր կեանքում: Այժմ ես ինչպէ՞ս կարող եմ հեռանալ քեզանից, երբ դու ինքդ ասում ես թէ «ձեր նաւը մրրիկների մէջ է գնում»...